

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյալ խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի և սուրբ օրերից):

Յայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարությունների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-րդ ՏԱՐԻ

20-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական ՀԵՌԱԳՐԱԳՐՈՒՄԻՆԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ»-ն կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների միջև):

Կայսերական ռուս լրագրողների «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարություններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով: Բառերը վճարվում է 2 կոպեկով:

«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարություններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյալ լրագրողների յայտարարությունները, մասնացուցակները և պաշտօնական հաստատությունները յայտարարությունները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս և քիչ քան 4 երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր բարեգործական ընկերությունը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գործելու մոռացված մի ասպարէզ. Նամակ Ս. Պետերբուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարլամենտական բանակում: Գերմանիայում: Արտաքին լուրեր.—ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳՐԱԳՐՈՒՄԻՆԻ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ահարարներ:

ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ մօտ մի որ և է հաստատություն մասին գրելու և նրա այս կամ այն պակասությունը ցոյց տալու մասամբ նմանվում է ջուր մաղելու և զործողություններ: Գրում էք, ցոյց էք տալիս անկերտ պակասություններ, ցոյց էք տալիս գործողություններ անելի խեղացի ճանապարհ,—բոլորը ապարդիւն է լինում: Արդեօք ձեր քննադատած հաստատությունը կը փոխարինու՞մ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

XVI

Նոյեմբերի 24-ին եւ էլ զնացի «Արշակ Բ»-ի ներկայացմանը: Գնում էի թատրոն մի առանձին հետաքրքրություններ և սիրով: Երկար ժամանակ էր հայոց ներկայացում չէի տեսել: Խմբի ներկայացումների մասին թեր և դէմ կարծիքներ շատ էի լսել: Ուրախ էի, որ վերջապէս իմ աչքերով պէտք է տեսնել այն, ինչի մասին այնքան շատ էի լսում հեռուից:

Բայց ամառ: Ուրախ սրտով գնացի, դուրս եկայ տրուռ: Գուրս եկայ միմյալով: Գլխի պէտք է գցել այս պատմական պիեսները. սրանցից բան չի դուրս գալ:

—Գլխի գցել պատմական պիեսները, ինչ էր ասում. դա անկարելի է.—կը պատասխանի անկասկած այն ընթերցողը, որ անարատ և բարձր կարծիք ունի «Թատրոն» և պատմական գրականության կրթիչ ու ոգևորիչ նշանակություն մասին:

Յաւում եմ, որ անկարող եմ համաձայնել այդ տեսակ մի ամբողջ ընթերցողների հետ:

Եւ ասա թէ ինչու:

Պատմական պիեսները ներկայացնելիս ամեն մի թատրոն երկու նպատակ կարող է ունենալ: Առաջինը պատկերացնել հանդիսականին:

տուրիւնը թատրոն է թէ բարեգործական ընկերությունը, դուրան թէ դպրոցը.—մի և նոյն է... Միշտ ապարդիւն են մնում ձեր քննադատական արդար հայեացքները:

Եւ ի՞նչ զարմանալու բան կայ թէ մամուլը, անընդհատաբար ջանք անելով մեր հաստատություններին ճշմարտությունը հասկացնելու և տեսնելով թէ իր բոլոր ասածները և ոչ մէկը չէ ընդունվում, իր բոլոր արած ջանքերը ապարդիւն են մնում,—ստիպված է ժամանակ առ ժամանակ մի և նոյն մտքերը կրկնելու: Եւ դեռ գտնվում են անձինք, որոնք իրաւունք են համարում մեղադրել մամուլը թէ նա շատ անգամ կը կնուսւմ է մի և նոյն մտքերը... Պարզ բան է, որ ինչքան ձանձրալի էլ լինեն կրկնությունները, բայց մամուլը ըստ ի պիտի է կրկնել իր մի և նոյն դատողությունները, քանի որ մեր հասարակաց

րի առաջ այս կամ այն պատմական եղելությունը, կամ անձնաւորությունները, իրանց իսկական, պատմական ճշգրտութեամբ, պատմական ճշգրտութեամբ հետ՝ ձեռք ձեռքի տուած զարգացնելով գործողությունները հոգեբանական ընթացքը: Եւ երկրորդը՝ պատկերացնել պատմական մի նշանաւոր անցք, կամ դէպք, որքան կարելի է փառաւոր, չորի, ջերմ գրգռող կերպով, առանց ուշք դարձնելու գրական, այսպէս ասած, ողբերգական հոգեբանական կողմի վրա:

Առաջին դէպքում պէտք է գրել պատմական դրամաներ, ողբերգություններ, իսկ երկրորդ դէպքում պէտք է տալ պատմական ֆէրիաներ:

Առաջին տեսակի գրականությունը, այն է պատմական դրամաներ և ողբերգությունները գրելը վերին աստիճանի դժուար գործ է: Գրա համար պէտք է զորող լաւ, շատ լաւ ծանօթ լինի պատմական այն շրջանի և այդ շրջանում գործող անձանց հետ, որից նա ուզում է վերցնել իր պիեսային նիւթը: Բայց միայն այդ ծանօթութիւնը բաւական չէ: Հարկաւոր է, որ թատերագրողը այնքան տաղանդ ունենայ, որ կարողանայ այդ անձնաւորություններին՝ պատմական համապատասխան գործողութեան մէջ դնել, պատմական ճշգրտութեամբ ստեղծել, և իր հերոսներին այնպիսի կերպարանքով, զգուրպիւրներով և ձգտումներով հանդէս բերել, որ համապատասխան ճշգրտութեան համապատասխան լինի, համ էլ չը շեղվի մարդկային զգացմունքների և կրքերի հոգեբանական ճշգրտութիւնից:

Այդ բոլորն անկու համար, ինչ կասկած, որ

հաստատություններում կը կնուսւմ են նոյն սխալները:

Վերջները, օրինակի համար մեր հայոց բարեգործական ընկերությունը. հազար անգամ ասել ենք և նորից ստիպված ենք կրկնել թէ այդ ընկերության գործունէությունը եղանակը չունի մարդկային գործողությունների նման է, ապարդիւն է, և այդ պատճառով ընկերություն էլ, այսքան տարի զոյուցիւն ունենալով, չէ գրաւում մեր հասարակութեան համակրությունը:

Երեւակայեցէք որ ես, մի մասնաւոր մարդ լինելով իմ ամառական եկամուտից մի 50 ռուբլի աւելորդ ունեմ, որը և ուզում եմ իւրաքանչիւր ամիս գործածել բարեգործությունների վրա: Արդեօք դուք ապարդիւն գործողութիւն չէք համարի, եթէ ես ամեն ամիս մանրացնում այդ 50 ռուբլին 5 կոպեկանոց զրամների վրա, և գործածեմ այդ զրամները տարէն տասն և երկու ամիս փողոցի մուրացիաներին ողորմութիւն տալու նպատակով. այն ինչ, եթէ ես այդ նոյն յիսուն ռուբլով, զիցուք, երկու ուսանող կամ ուսանողուհի պահէի որ և է միջնակարգ կամ բարձրագոյն դպրոցում, իւրաքանչիւր ամսական 25-ական ռուբլի տալով, ես մեծ և շոշափելի օգուտ կը բերէի հասարակութեանը, ուսեալ, ինտելիգենտ անձինք պարտաւորվ հայրենի հասարակութեան համար: Կամ ի՞նչպէս էք ձգտում, ի՞նչ կը լինէր աւելի շոշափելի օգուտ իմ նշանակած ամսական 50 ռուբլին բաժանել 10 հոգի ուսանողների կամ աշակերտների մէջ և բոլորին էլ քաղցած ու ողորմելի դրութեան մէջ պահելով պարծնելով, ամենքիս առաջ փքվել թէ 10 հոգի թոշակաւոր են մի պահում, թէ այդ նոյն ամսական 50 ռուբլով պահել միայն երկու ուսանող, իւրաքանչիւրին ամսական 25-ական ռուբլի տալով...:

Նոյնն անում է մեր կողմանէ հայոց բարեգործական ընկերությունը: Առաջարկում էք այդ ընկերությունը մի թոշակաւոր աշակերտ պահել իր ծախսով. ընկերությունը ընդունում է և փառաւոր կերպով նշանակում է՝ ամսական 5 ռուբլի թոշակ այդ աշակերտին:

Թատերագրողը պէտք է ունենայ նախ՝ գրելու տաղանդ և ապա պատմական նուրբ հմտություններ:

Իսկ եթէ թատերագրողը, անտես առնելով պիեսային հոգեբանական, դրամատիկական կողմը, երկրորդական նշանակութիւն տալով ՅԱՅՏԱՐԱՐԱՆԻ և ընկերական-պատմական ճշգրտութեան, չընկնելով իր հերոսների գործողությունների յաջորդականութեան հետեւ, իր գլխաւոր նպատակը կը դարձնի լոկ պատկերացնել այս կամ այն պատմական նշանաւոր դէպքը, միմյալ հանդիսականների ջերմ գրգռելու համար, կամ գաղափար տալու համար, թէ մեզանից 1,000 կամ 1,500 տարի առաջ ինչպէս էին հագնվում, ինչ հասարակական, կամ կառավարական վարք ու բարք ունէին, ինչ դէմքերով էին կաւում, կամ թէ ինչպէս էր այս կամ այն հերոսը իր հետեւից քաշում ամբողջ ժողովուրդը դէպի պատերազմի դաշտը,—այն ժամանակ նրա գրածը կը լինի մի պատմական ֆէրիա, և ուրիշ ոչինչ:

Պատմական շնորհով դրամաները և տրագիկաները ոչ թէ գրգռում են հանդիսականի ջերմը, այլ գլխաւորապէս մտաւոր պաշար են տալիս նրա մտքին, ուղեղին, ստիպում են նրան քննական աչքով նայել այս և այն պատմական դէպքի կամ անձնաւորությունների արարքի վրա, պատկերացնելու են մի իրական կեանք, որը թէ է հեռու անցնալից է գծագրված, բայց և այնպէս պահանջ է իր բոլոր նրբութիւնները, իր կրթիչ բոլոր կողմերը:

Եւ երբ ընկերությունն անդամներին դիմում էք հարցմունքով. «Դա ի՞նչ է, պարոններ, ծաղր է, թէ ի՞նչ բան է, ամառական հինգ ռուբլիով ի՞նչ կը դառնայ...» բարեգործ պարոնները շատ ծանր կերպով պատասխանում են ձեզ. «Ինչ անեք, շատ ունեք թոշակաւորներ և ընկերությունն ընդհանուր ժողովը այդպէս է վճարել հինգ ռուբլուց աւելի ոչ մի թոշակաւորին չը տալ»:

Ինչպէս այն հարուստը, որը կրկնել օր, եկեղեցի գնալով մի 10 ռուբլի կը մանրացնէ և փողոցներում հանդիպած մուրացիաներից իւրաքանչիւրին երկու կոպեկ կը տալ, ու գոհ սրտով առնէ կը վերադառնայ, երեւակայելով թէ ճշմարիտ գործ է կատարել այն ինչ ուրիշ ոչինչ չէ արել, եթէ ոչ ջուր է մաղել, որովհետեւ դիցուք մի չքաւոր բնասիրքին տուած 10 ռուբլին դարձեալ մեծ օգնութիւն է, իսկ տասնեակ փողոցային մուրացիաներին երկու երկու կոպեկ տալը՝ ոչինչ նշանակություն չունի,—այնպէս էլ մեր բարեգործական ընկերությունը երեւակայում է թէ գործ է կատարում 100 թոշակաւորներին պահելով և նրանցից իւրաքանչիւրին ամսական հինգ հինգ ռուբլի տալով, այն ինչ, եթէ նոյն ընկերությունը բաւականանար այլ և այլ դպրոցներում փոխանակ հարկերի, միայն, զիցուք 30 թոշակաւոր աշակերտներ պահելու, իւրաքանչիւրին ամսական 15-ական ռուբլի յատկացնելով, նա նոյն գումարը և աւելի էլ պակաս ծախսելով՝ ճշմարիտ բարձր գործ և շոշափելի բարեգործություն արած կը լինէր, օգնելով ուսում առնող չքաւոր երիտասարդությունը իր ուսումը մեր միջնակարգ դպրոցներում շարունակելու և աւարտելու:

Թէ չէ, ճշմարիտ դա մի կատարեալ ծաղր է, կատարեալ ապարդիւն ջուր մաղել է... Մի տասնեակ կամ նոյն իսկ մի հարիւր ողորմելի, չքաւոր աշակերտներին այլ և այլ դպրոցներում ամսական հինգ հինգ ռուբլի են տալիս և երեւակայում են թէ բան են շինում, թէ ճշմարիտ նպատակում են ուսման տարածմանը ապրի մէջ... Իսկ փորձեցէք խօսել այդ խեղճ պարոն-

Ֆերիաները, ընդհատակին, մի գլխաւոր նպատակ միայն ունեն,—աղղել հանդիսականի ջերմի վրա, ժողովուրդին արտադրող ջաշայն ցընցումներ պատճառել, և կամ շատ շատ գաղափար տալ պատմական անցեալի արտաքին կողմի վրա, առանց մոռնելու այդ անցեալի և նրա մէջ գործող անձանց արարքների հոգեբանական ներքին կողմի մէջ:

Պատմական առաջին տեսակի պիեսները հետաքրքրելի կը լինեն հասարակութեան աւելի ինտելիգենտ, աւելի զարգացած դասակարգի համար, որը միայն դուրսնաւոր համար չէ գնում թատրոն: Երկրորդ տեսակի պիեսները, ֆէրիաները թատրոն կը գրաւեն ժողովուրդի մտաւորապէս չը զարգացած խաւերը, ամբողջին, որը եթէ թատրոն գնայ, միմյալ գուարճանաւոր կամ իր փետացած ջերմ գրգռելու համար կը գնայ:

Երկուսից իւրաքանչիւրն էլ ունի իր տեղը, իրան յատուկ նպատակը, իր յաճախողների որոշ կօծութիւններ:

Ուստի երկուսն էլ հարկաւոր են:

Այդ, թէ է մի փոքր երկար, բայց անհրաժեշտ առաջաբանից յետոյ, ես կանցնեմ մեր հայկական պատմական պիեսներին:

Մի փոքր հեռատես ընթերցողը, որը նոյնպէս ծանօթ է հայոց պատմական պիեսներին, անշուշտ, իմ այդ առաջաբանից յետոյ, հասկացած պիտի լինի, թէ ինչու վերն տեսելի, որ «Արշակ Բ»-ի ներկայացմանը գնացի ուրախ սրտով և դուրս եկայ տրուռ, և թէ ինչու «մեր պատմա-

ների հետ, ամեն մէկը նրանցից կարծում է թէ իր չափը խելք ունեցող ոչ ոք չը կայ աշխարհիս երեւոյն, ամեն մէկը նրանցից իրան թոյլ է տալիս դատողութիւն անել ամենալուրջ հասարակական հարցերի վրա, վիճաբանել թէ վերացական, թէ ազգային ու հասարակական ընթացիկ ամենա-կարեւոր խնդիրները վրա... Իսկ ամենահա-սարակ բանը չեն հասկանում թէ ոչ մի աշխարհում ամսական 5 ռուբլիով չէ կարող ապրել և ուսում առնել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԵԼՈՒ ՄՈՌՈՒՅՑԱԾ ՄԻ ԱՍՊԱՐԷ

Խնտելիքն առնաւորութիւնները պիտի ձգ-տեն գիւղեր ցրվելու, այնպէս որ ծեղու, գիւղական կեանքը, գիւղացու ցաւն ու դարձը ուսումնասիրելու, գիւղացուն «մութ աշխարհից» չլքուի աշխարհ հանելու, — ահա թէ ինչ էր քա-րոզում «Մշակը» ապրիլի ընթացքում, խնտելիքից իր անշուշտ ան-պարտականութիւնը ևս գնելով:

Պարզ բան է, որ այդ մտքի կատարելը իրա-կանաբար հանրամարտկային և ազգային տեսա-կէտից մեծ օգուտ կը տար մեզ և, իբրև կեանքի մի պայծառ երևոյթ, մեր գրականութեան ու պատմութեան մէջ նշանաւոր տեղ կը բռնէր, ուրովհետեւ այդպիսով մեր առաջնորդական գոր-ծին մեծ դարկ տուած կը լինէինք:

Գիւղերում կայ խտելիքեցիական միայն ոչ ընդ-հանրապէս: Այդ խտելիքեցիական գլխաւորապէս կազմում են ուսուցիչները, թէև նրանց մէջ լի-նում են և մասնաւոր անհատութիւններ, ուրոնց թիւը կախած է, ի հարկէ, գիւղական ու-սումնաբանի կազմակերպութիւնից: Թէ որքան է այդ խտելիքեցիական իրան նուիրել վերոյիշեալ գաղափարին, թէ որքան է նա չիմու գիւղացու հետ, դրաւորում գիւղական կեանքով, նրա առ-րեայ հարցերով, պահանջներով և վերջապէս «մուսլ» ու չլուսաւոր երեւոյթներով, — այդ մեր յոգածն է նման չէ. մենք միայն մատնացոյց ենք անում գիւղական խտելիքեցիական վերոյիշեալ պարտականութեան վրա և կամենում ենք մատ-նացոյց անել գործունէութեան մի այլ ասպարէզի վրա, որը նրա կողմից բոլորովին մոռացված է:

Այդ ասպարէզը գիւղական տանտնտէրութիւնն է: Գիւղական կեանքին հասարակական քնա-ւորութիւն տալու, նրան բաւարար պայմաններ մէջ և բարեւ ճիւղերի վրա դնելու, համա-րաշխարհական դադարաւոր գիւղացիների մէջ դար-գացնելու, նրանց բարոյական և մտաւոր ոյժերի գարգանալուն դարկ տալու, գիւղական կեանքի

մէջ մխիթարել և լուսաւոր երեւոյթներ առաջա-նելու, մի խոսքով, առաջադիմական քայլեր տես-նելու համար՝ հարկաւոր են գործունէայ, հմուտ և զարգացած անհատութիւններ, որոնց ձեռ-քին պիտի լինի գիւղի հասարակական կեանքի ղեկը:

Գիւղերում այդ ղեկը գտնվում է գլխաւորա-պէս գիւղական տանտնտէրի ձեռքում: Բայց որ-քան ցաւալի է այն, որ մեր տանտնտէրերը, բոլո-րն էլ համարեա, լինում են աղէտ, գործելու անընդունակ ու վերին աստիճանի կաշառակեր անհատութիւններ միայն: Նրանք կամ անըն-դունակ են լինում գանազան հարցեր վճելու, որոնք առաջ են գալիս գիւղացիների դանդա-նակից, կամ հարցը վճելու են խնամական տե-սակէտից, չեն կարողանում տեսնել գիւղական կեանքի մէջ առաջացած և առաջ եկող վնասա-կար, մ. յ. յ. երեւոյթները, չեն մտածում իսկի-նայն երեւոյթներին առաջն առնելու, նրանց ջը-նջելու համար և իրանց տանտնտէրութիւնը ամ-բողջ երեք տարւոյ ընթացքում միայն անգործու-նէութեան մէջ են անցկացնում:

Տանտնտէրը մէջդան է դուրս գալիս միայն գանազանների ժամանակ, այն էլ, Առտուած գիտէ, թէ ինչպէս է դատում, հարց վճելու: Երբ գա-նազա չը կայ, տանտնտէրն էլ չը կայ. նա կամ բոլորովին անգործ է և կամ զբաղված է իր ան-նական գործերով, որոնք այսպէս թէ այնպէս իրան չա՛ն խոտանում. նա ընկած է դուցէ կա-շառքների ետեւից: Բայց մտածել գիւղացիների մա-սին, նրանց ցաւերին մասնակից լինել, գիւղ-ացիներին ցաւերից ազատել, ուսման, կրթու-թեան գործին նպաստել գործով, մի խօսքով, հերթի յօգուտ իր գիւղի հասարակութեան շա-հերի, — այդպիսի բաների մասին տանտնտէր ոչ լսել է, և ոչ մտածում է...

Բացի այդ, այժման տանտնտէրերը խիստ թը-նամբներ էլ են իրանց տգիտութեամբ գիւղական խտելիքեցիական, ուսուցիչներին, որոնք կամե-նում են գիւղական կեանքի մէջ մի նոր և օգ-տակար բան մտցնել, կամ հետաքրքրվել հասա-րակական-գանազան հարցերով:

Բայց երևակայեցէ՛ք, որ տանտնտէրը, գիւղի հասարակական կեանքի այդ գլխաւոր ղեկավարը, մի գործունէայ և խտելիքեցիական անհատութիւն լինէր, որքան դա բաղաւորութիւն կը լինէր թէ գիւղացիների և թէ նոյն իսկ խտելիքեցիայի համար: Գիւղական խտելիքեցիական գործունէայ, հմուտ և բարոյական տանտնտէրի հետ միայն ձեռք ձեռքի տուած կը գործէր յօգուտ գիւղա-կան հասարակութեան, իսկ այդ մեր հասարա-կական կեանքում մի նշանաւոր երեւոյթ կը լինէր:

Գիւղական հասարակութիւնը նոր տանտնտէր ընտրելու վրա թող խնամութեան տեսակէտից չը նայէ. նա թող տանտնտէր ընտրէ գործունէայ,

զարգացած ու բարոյական մի անհատութիւն, որը մեծ օգուտ կը բերէր գիւղի կեանքին: Գիւղական խտելիքեցիական թող ձգուէ տանտնտէրա-կան ասպարէզում ևս գործելու, տանտնտէրի պա-տճը խտելիքեցիական անհատութիւնները յանձնելով:

Մեր կարծիքով տանտնտէրը գիւղական խտե-լիքեցիայի հետ զաղափարակից անհատութիւն պիտի լինի: Տանտնտէրերի և խտելիքեցի-այի մէջ մի ներքին կապ պիտի լինի: Այդ մեզ անհրաժեշտ է ներկայումս:

Ա. Գ.

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԳՈՒՐԳԻՑ

Նոյեմբերի 18-ին

Այստեղի հայ ուսանողները ամեն տարի հայ-կական երեկոյթ են անցնում, յօգուտ չբաւոր հայ ուսանողների: Ժողովուրդը, թէ հայ և թէ ռուս, աջակցել է միշտ ուսանողներին իր ներ-կայութեամբ: Հայրեր, բացի բարեգործական զգացմունքից դրված լինելուց, փափաղել են տարին դնել մէկ անգամ հայկական կեանքով ապրել, իսկ ռուս ժողովուրդը, այն էլ բարձր դասակարգը, գալիս էր միշտ իբրև մի արտաքոյ կեանքի հետ ծանօթանալու համար: Եթե անսան-կան թեմականները սկսած, հայկական երեկոյթ-ները տրվել են տարուց տարի և միշտ հայկական քնաւորութիւն են ունեցել: Իսկ 1888 թվից սկ-սած, փոքր առ փոքր իրանց գոյնը կորցրել են: Այս տարւոյ երեկոյթը, որ տրվեց նոյեմբերի 17-ին «Благородное Общество» ժողովարանի դահլիճում, միայն անունն էր կրում հայկական, իսկ երեկոյթը իսկապէս, մի եւրոպական կո-նցրէր էր: Բացի դրանից, մասնակցողներից ոչ մի հայ չը կար, եթէ չը հաւենք երեկոյթի խումբը, որը բոլորովին խաղաղակցից իր անձուներ եր-գեցողութեամբ: Լաւ էր դնել, որ այնքան հա-մեստ գտնվեցան, որ միայն մի երգ երգեցին:

Պ. պ. դեկաւարները ի նկատի պիտի ունենան, որ ժողովուրդի համակրութիւնը դէպի հայկական երեկոյթները չէ կարելի ի չար գործ դնել:

Գալով կոնցրէտին, պիտի խոստովանված, որ լաւ էր կազմված, թէպէտ մի քանի պարոններ չը կարողացան մասնակցել, այժմ այսպիսի սա-տիկ տարածված ինքնուրուշ հիւանդութեան պատճառով: Հանդիսականներին հիացրին իրանց երգեցողութեամբ՝ արքունական օպերայի երգիչ-ներ՝ Պրոնով և մանասանը՝ Միխայիլով՝ որը ար-ժանացաւ բոլոր ծափահարութեան: Նկարիչ Կա-րապետի կենդանի պատկերը շատ թոյլ էր. դրան անգամ չէ կարելի կենդանի պատկերի անունը տալ: Բացվեց բեմը. բեմի վրա մօտ 50 մարդ, կովկասեան զինաներով կանգնած էին անշարժ. մի քանի վայրկեանից յետոյ սկսվեց կովկասեան երաժշտութիւնը և սովորական լեզուներով:

Այսպէս գործել են «Արշակ» և ուրիշ շատ պիկա-սներ հեղինակները, անտես առնելով հայ կիւնքը: Ի՛նչ երևակայեցէ՛ք մեր հասարակութեան դու-րսերը, որ 19-րդ դարում թատրոն է գնում, ամբողջ 5 գործողութեամբ պիկեսային նայում, բայց բաղդ չէ ունենում մի հատ կին տեսնել բեմի վրա:

2) Բեմ է դուրս գալիս ղեկու-նէնց նոյն Ար-շակը: Հեղինակը նրան ուզում է ցոյց տալ իբրև հասարակական, հօգի, աներկիւղ: Շատ լաւ: Եւ ահա պարսիկ ողորմելի մի պաշտօնաւ, մի Աւա-նոգան, իբրեւորում է, անպատում է այդ հօգի և աներկիւղ հոգեւոր, ծիծաղում է նրա վրա, մինչև իսկ անպատում է նրա կնոջ յիշատակը, անունը, իր կենդանու մասներով դիպչում է այդ հոգեւոր ընտանեկան բոլոր սրբութիւններին («Ար-շակ» թագուհի փառանքաւոր ուրուականի տե-սարանը) — բայց այդ նոյն հոգեւոր, որի բերանից արտասանած ձեռնաձիգ ֆրազները ականջներ են լսացնում, տան անգամ իր սուրը հանում, նորից պատենան է գնում, ձեռքը վրա չէ գալիս, որ խոզիտիկ այդ անպարտաւան սրիկային...

Եւ որովհետեւ, կամ ինչու համար են ստեղծում մեծ-մեծ խոտը, բայց ոչինչ չանող տիպերը, ինչ պատմական ճշգրտութիւն կայ այդտեղ:

3) Բեմ են դուրս բերում ղեկու-նէնց «Արշակ» — հայ նախարար, իբրև մի կեն-դանի ներկայացուցիչ հայրենասէր, անձուներ, չիտակ, տիրաւոր հայ նախարարի: Եւ տեսէ՛ք թէ ինչ է անում Գալֆայանների և Կարինեան-ների նման թատերադրողների ստեղծած հերոսը:

Դահլիճը և նախասենյակը զարդարված էին ասիական ճաշակով. դահլիճի ձախ կողմը սարք-ված էր մի կիտիկ, որտեղ յայտնի դերասանուհի տիկին Սալինա, զինի և միւրք էր վաճառում հանդիսականներին:

Տիկին Սալինա այդ գիշեր հագել էր հայկա-կան զգեստներ և դուրեւր կապել էր Ախալցխայի հայուհիների նման: Այդ մեծ գիւղաբնակաւոր-տուհին հասկացել էր այդ երեկոյթի նշանակու-թիւնը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր յայտնի բանաստեղծ Սմբատ Դահլիճը գրել է մեզ մի վերին աստիճանի ոգեւորված նա-մակ «Լիլիթ» վէպի առթիւ: Դեռ առթիւ և իր նամակի վերջում յայտնում է, որ առնում է այդ վէպից 30 օրինակ, խնդրելով որ ձրեպակ տարածենք այդ գրքի 30 օրինակները, որպէս զի, ինչպէս նա ասում է, այդ գրքի միջոցով «տարածվեն վեհանքն և մարդասէր գաղափարներ»: Մենք մեր պարտաւորութիւնը կը համարենք պ. Դահլիճի անունից տարածել 30 օրինակ այդ գրքից: Գը-լաւորապէս մեր խտելիքեցիական շրջանում, այն է բարձրագոյն դպրոցների հայ ուսանողութեան մէջ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում, նմանապէս գրադարան-ընթացաբաններին և մի քանի դպրոցական գրադարաններին հասցնել վե-րոյիշեալ գրքից:

Այսօր, հինգշաբթի օր, նոյեմբերի 28-ին, հայ դերասանական խումբը քաղաքային թատրոնում ներկայացնելու է Բիորսոնի «Վանկութիւն» ա-նունով, 4 գործողութեամբ պիեսան, թարգմանու-թիւն Չիլիանեանի: Տեղերի գինը սովորական է: Սկիզբը 7 1/2 ժամին:

Շնորհակալութեամբ ստացանք բժշկապետ Ս. Առստամանցից (Աստրախանցի), նրա մի քանի բժշկական հետազոտութիւնները, ջուկ ջուկ բը-շխարհում տպված, թէ ռուսերէն և թէ գերմա-ներէն լեզուով: Բժշկական այդ հետազոտութիւ-նների մեծ մասը չափից դուրս մասնագիտական քնաւորութիւն են կրում, սակայն նրանց թուում ընդհանուր ընթացանութեանը աւելի մատչելի քովնակութիւն ունեցող բըշխարհները սրանք են. 1) Къ вопросу о происхождении крупозного воспаления легких (զովտորական դիստրոֆիա) 2) О природе рыбного яда 3) Очерки са-нитарного состояния Астраханских рыболовных промыслов:

Շնորհակալութեամբ ստացանք Թիմիւի Ներ-ժշտական ընկերութեան վարչութիւնից՝ թէ ըն-

Նրա, այդ փայտից շինած Գրաստամանների ներ-կայութեամբ, հայտնում են հայի կրօնը, անպատ-ում են թագաւորին, անարգում են թագուհուն, ծաղրում են հային, և այդ իրազեպանքը անդա-դար գոռում է՝ «Ես քեզ այս կանեմ, այն կանեմ, իմ կեանքը իմ հայրենիքին և իմ թագաւորին և պատկանում, իմացիլ թէ ու մօտ ես այսպէս աս բարտաւան խօսում, բայց ինչպէս այդ դատաւ սպաւաւալիքներից գնել չէ անցնում, անձնու-տիրաւոր նախարարը միմիայն ձեռնաձիգ ֆրազն է արտասանում և կոտրած ձեռքը մի անգամ չէ բարձրացնում լիբը, ամբարտաւան հակա-կորդի վրա, թէև շատ լաւ գիտէ, որ եթէ նրա ուսներն էլ լիզի, էլի կանազան պիտը է բարձ-րանայ, կամ բանտի մութ անկիւնները նետվի»:

Այդ է, միթէ՛ հայոց անձուներ, հայրենասէր տիրաւոր և աներկիւղ նախարար, տիպը որ պարտաւան խօսում:

4) Գլուր են բերում այդ պիեսաներում IV և V դարու հոգեբանականներ: Եւ փոխանակ մեզ առ-լու պատմական այն վեղարար — հերոսներին, որոնք զեկավարում են ազգի նոյն իսկ քաղաքական կեանքը, ողորկելով և ոտի կանգնելով ժողովրդին, տալիս են մեզ լաւկան, և միայն խոցելի մէջ աղօթելու ընդունակ սեւագուլներ, որոնք աւելի մեր այժմեան հոգեբանականութեան նման, քան թէ V դարու:

Եւ ուր միայն պատմական ճշգրտութիւնը, եւ ուրիշ տարեկակ այդպիսի անհիմնութիւն-ները...

(Կը շարունակվի)

կան պիեսանները դէն պէտք է գցել: Հասկանալի պատճառով: Որովհետեւ մեր պատ-մական պիեսանները, առանց բացառութեան, չեն համապատասխանում այն պայմաններին, որ ես վերև դրեցի պատմական պիեսանների վերաբեր-մամբ: Գնե՛ք այդ միջոցով բոլոր յայտնի բանա-լիքները:

Առեցէ՛ք խնդրեմ, ինչ են այդ «Արշակ Բ.», «Վարդանանց պատերազմ», «Սամուէլ», «Շուշա-նիկ», «Երուսաղէմ», «Սնի քաղաքի աւերումը», և այդ տեսակ պիեսանները: — պատմական դրամա-ներ, ողբերգութիւններ, թէ ֆէեթիւններ:

Ոչ մէկը, և ոչ միւրք:

Ես չը գիտեմ (չեղած տեղից) որտեղից կարե-լի է դիտենալ և ոչ մի հատ պատմական հայե-րէն պիեսան, որը կարելի լինէր, վերին առաջ ըն-րած կէտերի համաձայն՝ անտեսել պատմական դրամա, կամ ողբերգութիւն, և կամ որը ունե-նար այն յատկութիւնները, որ պէտք է ունենայ ամեն մի շնորհով ֆէեթիւն:

Նայելով այդ պիեսանների վրա՝ դրամայի կամ ողբերգութեան տեսակէտից, մարդ չուտում է, որովհետեւ դրանց մէջ չը կայ ոչ խելացի ՅԱՅՅԱՅԱ, և ոչ էլ դրանից բխող հետադիմական գործողու-թիւնների վրա հիմնված ՅԱՅՅԱՅԱ, ոչ որոշ գծա-գրած տիպեր, ոչ պատմական ճշգրտութեան համա-պատասխանող հերոսներ, ոչ որդեգիր հայր, ոչ մայրաւոր դաւան, ոչ միւրով վառված երիտասարդ, ոչ հայրենիքի համար դիմող քաղաք, մի խօսքով կենդանի, ազդող, զգացող մարդիկ, այլ դրանց փոխարէն բեմ են գալիս և գնում կարծէք փայ-տից չիտած մարդիկ, որ գալիս են, որ խօսեն, իրանց զերը ասեն ու դուրս գնան...

Նայելով մեր «Արշակ»-ներին՝ «Սամուէլ»-ներին, «Վարդանանց պատերազմ»-ներին՝ վրա՛ իբրև ֆէե-թիւնների վրա, մարդ էլ չուտում է, որովհետեւ դրանք չունեն ոչ այն ջղեր գրգռող, միտք ապ-չեցնող ազդու տեսարանները, որոնք յատուկ են ֆէեթիւններին, և ոչ էլ գաղափար են տալիս պատմական որ և է չը զանի հայրենասիրի, աղ-գային օտոյորութիւնների, ծեսերի, վաք ու բար-քի, յայտնի հերոսների մասին. — առանց որոնց էլի ֆէեթիւնի ֆէեթիւն չէ:

Վերցնե՛ք հէնց այդ «Արշակ Բ.», որ մեր պատմական պիեսանների մէջ ամենամշտնապէս լինում է համարում, և որը մօտ քաղաք դար է արդեն գոյութիւն ու-նի մեր թատրոնական բեմերում: Դիմէ՛ք:

Ինքնի վ. Գալֆայանս մի այնպիսի «բան» է չինել «Արշակ Բ.»-ից, որ ամենատաղանդաւոր դերասան անգամ, մեռնի, տալիք էլ չէ կարող ընտանութեան անհամարները մտնել, և խաղալ զգալով, առանց արուեստականութեան:

Առաջ բերե՛ք մի քանի կէտեր:

1) Պիեսայի ներքին վերցրած է հայոց պատ-մութեան այն շրջաններից, «Արշակը թագաւորեց 364—382 թվականներին» երբ հայոց կանանց չը շնանում սկսում էին երեսն դալ «տիկնայք փափկաւորեց հայոց աշխարհին», երբ հայ կինը սկսել էր մասնակցութիւն ունենալ ազգի քաղա-քական կեանքի մէջ: Երբ մարդու հետ միասին զգալով երկրի քաղաքական կողմնաձիգ ամբողջ ծանրութիւնը: — մի չը ջան, որին վերաբերեալ գրուածքի մէջ անտես առնել հայ կնոջը, — կը նշանակի պատմական մեծ սխալ գործել: Եւ այդ

